Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-621[3]-21.06.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նոտարիատի մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 21.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«21.1) արձակում է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն.»:

Հոդված 2. Օրենքի 36.1-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1. Նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողությունների արդյունքում կայացվող որոշումը, գործարքը, գումարի բռնագանձման պահանջով արձակած կարգադրությունը կամ այլ փաստաթղթի հաստատումը կամ վավերացումը, կատարողական մակագրության թերթը հանդիսանում են նոտարական ակտ:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել 18.2 գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գ Լ ՈՒ Խ 18.2

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՄԱՐԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋՈՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼԸ

Հոդված 82.4 Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելը

1. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը (այսուհետ՝ դիմում) ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի (ներառյալ՝ *փուժանքի (փուգանքի, փույժի), փոկոսների և այլ վճարների*) բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմում նոտարին ներկայացնում են բանկերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև էներգետիկայի (էլեկտրաէներգետիկայի, ջերմամատակարարման, գազամատակարարման), ջրային և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտներում կարգավորվող գործունեություն իրականացնող անձինք (այսուհետ սույն գլխում նաև՝ դիմող)՝ սպառողների կամ հաճախորդների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Արտարժույթով պահանջ ներկայացվելու դեպքում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցելու հարցը որոշվում է դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով դիմող է համարվում նաև այն անձը, ում զիջվել է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանագրերից բխող պահանջը:

3. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումի հետ չեն կարող ներկայացվել դրամական բնույթ չկրող պահանջներ, բացառությամբ շարժական գույք հանդիսացող գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու պահանջների, եթե գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնությամբ սահմանվել է առանց դատարան դիմելու շարժական գույք հանդիսացող գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու մասին պայման:

4. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումը կարող է ներկայացվել մեկից ավելի անձանց դեմ, եթե պարտավորությունը համապարտ է:

5. Սույն հոդվածում նշված պահանջները ենթակա են քննության նոտարի կողմից սույն գլխով սահմանված կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելը մերժելու մասին որոշում

6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ գլխով նախատեսված կանոնները տարածվում են սույն գլխի նկատմամբ այնքանով, որքանով դրանք կիրառելի են նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու նկատմամբ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով:

Հոդված 82.5 Նոտարների միջև գործերի բաշխման և վերաբաշխման կարգը

1. Նոտարների միջև գործերի բաշխումը և վերաբաշխումը կատարվում է բացառապես հատուկ համակարգչային ծրագրի միջոցով (այսուհետ՝ Համակարգչային ծրագիր), որի շահագործման կարգը սահմանվում է Արդարադատության նախարարի հրամանով:

2. Դիմումը նոտարների միջև բաշխվում է այնպես, որպեսզի ապահովվի դրանց հնարավորինս հավասարաչափ բաշխումը: Նոտարների միջև դիմումների բաշխման, վերաբաշխման կարգը և չափանիշները սահմանվում է Արդարադատության նախարարի հրամանով:

3. Համակարգչային ծրագրի մշակման և գործարկման կարգը սահմանում է Նոտարական պալատը:

4. Եթե օբյեկտիվ պատճառներով առաջացել են տեխնիկական խնդիրներ՝ կապված Համակարգչային ծրագրի շահագործման հետ, ապա այդ հանգամանքը հայտնաբերած նոտարը անհապաղ այդ մասին տեղեկացնում է Նոտարական պալատին: Նոտարական պալատը ծանուցումն ստանալուց անմիջապես հետո քննարկում է պատճառները և դրանց վերացման ուղղությամբ տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ Համակարգչային ծրագրի անխափան շահագործման համար պատասխանատու աշխատակիցներին:

Հոդված 82.6 Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի ձևը և բովանդակությունը

1. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը Նոտարական պալատ ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, որում պետք է նշվեն՝

1) Նոտարական պալատի անվանումը,

2) դիմողի անվանումը, գտնվելու վայրի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, ինչպես նաև դիմողի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն՝ նոտարի որոշումները նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջնորդությամբ,

3) պարտապանի անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ ֆիզիկական անձի հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի, իսկ բնակության վայրն

անհայտ լինելու դեպքում՝ գույքի գտնվելու վայրի հասցեն, ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, առկայության դեպքում՝ հանրային ծառայության համարը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը.

4) դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ բռնագանձման ենթակա գումարի, ինչպես նաև առկայության դեպքում պահանջվող տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների գումարների հիմքն ու չափը, դրանց հաշվարկը.

5) պահանջը հաստատող ապացույցները, այդ թվում՝ պայմանագիրը և (կամ) պայմանագրի կնքման փաստը հավաստող ապացույցները.

6) առկայության դեպքում՝ պահանջի զիջման մասին պայմանագիրը, եթե դիմումը ներկայացվում է զիջված պահանջի հիման վրա.

7) պահանջ՝ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին,

8) հայտարարություն առ այն, որ պահանջը կապված չէ դեռևս չկատարված հանդիպակաց պարտավորությունների հետ, կամ հանդիպակաց պարտավորություններն արդեն կատարված են,

9) կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,

10) առկայության դեպքում տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի քննության և լուծման համար,

11) հայտարարություն առ այն, որ առկա չէ նույն անձանց վերաբերյալ, միևնույն փաստական հիմքերով և միևնույն պահանջի վերաբերյալ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելը մերժելու մասին որոշում,

12) նշում առ այն, որ պայմանագրով սահմանված է ծանուցման այլ կարգ՝ դրա առկայության դեպքում:

2. Դիմումին կցվում են պահանջը հաստատող ապացույցները, ինչպես նաև նոտարական գործողության վճարի վճարումը հավաստող փաստաթուղթը:

3. Դիմումը ստորագրում է դիմողը կամ նրա ներկայացուցիչը: Դիմումը ստորագրվում է էլեկտրոնային եղանակով:

4. Ներկայացուցչի ստորագրած դիմումին կցվում են նրա լիազորությունը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Դիմողի ներկայացուցչի լիազորությունները կարող են հաստատվել նաև էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային ստորագրությամբ տրված լիազորագրով, ինչպես նաև ստորագրված լիազորագրի սկանավորված տարբերակը ներկայացնելով:

5. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու համար գանձվում է նոտարական գործողության վճար՝ Կառավարության որոշմամբ սահմանված չափով:

Հոդված 82.7. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը վերադարձնելը

1. Նոտարը դիմումը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է դիմումը, եթե՝

1) չեն պահպանվել սույն օրենքով դիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները.

2) դիմումը ստորագրված չէ, կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնեական դրությունը նշված չէ.

3) դիմումը ներկայացրել է սույն օրենքի 82.4-րդ հոդվածի 1-ին մասում չնշված անձի կողմից.

4) ներկայացված դիմումում միացված են մի քանի պահանջներ, որոնցից մեկը ենթակա չէ նոտարի քննությանը,

5) դիմողը ներկայացրել է դիմումը հետ վերցնելու պահանջ.

6) դիմումի, այդ թվում՝ դիմումով ներկայացված պահանջի ու ներկայացված փաստաթղթերի (ապացույցների) միջև առկա է անհամապատասխանություն և առկա է այն շտկելու հնարավորություն:

2. Դիմումը վերադարձնելու մասին որոշումը էլեկտրոնային եղանակով ուղարկվում է պահանջատիրոջը, որն այն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում դրանում մատնանշված թերությունները վերացնելու դեպքում կարող է այն կրկին ներկայացնել:

3. Սահմանված ժամկետում թերությունները շտկելու դեպքում դիմումը համարվում է ներկայացված սկզբնական ներկայացման օրը:

4. Կրկին ներկայացված դիմումը մակագրվում է դիմումը վերադարձրած նույն նոտարին:

5. Դիմողի կողմից կրկին ներկայացված դիմումում նախկինում վկայակոչված թերությունները չշտկելու դեպքում, թերությունների շտկման համար նոր ժամկետ չի տրամադրվում:

Հոդված 82.8. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի քննության ժամկետը և կարգը

1. Եթե առկա չեն դիմումը վերադարձնելու կամ սույն օրենքի 82.9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը մերժելու հիմքերը, նոտարը դիմումն ստանալու օրվանից յոթ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է պարտապանին ստացված դիմումի մասին՝ առաջարկելով ծանուցումն ստանալու օրվանից քսան օրվա ընթացքում կատարել պարտավորությունը կամ ներկայացնել իր առարկությունները գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումի վերաբերյալ: Ծանուցման մեջ նշվում է նաև այն մասին, որ՝

1) գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը նոտարի կողմից արձակվելու դեպքում այն կողմերի համար դառնում է պարտադիր այն արձակելուց 10 օր հետո և ենթակա է հարկադիր կատարման.

2) գումարի բռնագանաձման պահանջով կարգադրություն արձակելու դեպքում նոտարական գործողության վճարի հատուցման պարտականությունը դրվում է պարտապանի վրա.

3) եթե գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումը «Նոտարիատի մասին» օրենքի 82.9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքով նոտարի կողմից մերժվում է, և դատարանն ամբողջությամբ բավարարում է նույն անձի դեմ նույն փաստական հիմքով ներկայացված պահանջը, գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու հետ կապված ծախսը (նոտարական գործողության վճարը)՝ դրա կրկնապատիկի չափով, հատուցելու պարտականությունը կարող է դրվել պարտապանի վրա:

2. Պարտապանին տրամադրված 20-օրյա ժամկետի ավարտին հաջորդող երկշաբաթյա ժամկետում նոտարը՝

1) ամբողջովին մերժում է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը.

2) արձակում է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն:

Հոդված 82.9. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի մերժումը

1. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը սույն օրենքի 82.8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում մերժվում է, եթե՝

1) առկա է նույն անձանց վերաբերյալ, միևնույն փաստական հիմքերով և միևնույն պահանջի վերաբերյալ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելը մերժելու կամ կարգադրություն արձակելու մասին նոտարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշում.

2) դիմողը սահմանված ժամկետում չի վերացրել նոտարի կողմից դիմումը վերադարձնելու մասին որոշմամբ մատնանշված թերությունները.

3) պահանջն առերևույթ հիմնավորված չէ.

4) պահանջի հիմքում ընկած գործարքն կամ գործարքի որևէ էական պայման առոչինչ է:

2. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը սույն օրենքի 82.8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում մերժվում է, եթե պարտապանը ծանուցում ստանալուց հետո սահմանված 20-օրյա ժամկետում՝

1) ներկայացրել է առարկություն, կամ

2) կատարել է վճարման պահանջը:

3. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու դեպքում նոտարն այդ մասին կայացնում է որոշում, որը ոչ ուշ քան հաջորդ օրը ուղարկվում է դիմողին և պարտապանին:

4. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու մասին նոտարի որոշումը չի զրկում դիմողին հետագայում նույն պահանջը դատարան ներկայացնելու իրավունքից:

Հոդված 82.10. Գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրության բովանդակությունը, այն պարտապանին ուղարկելը և կողմերի համար պարտադիր դառնալը

1. Նոտարը դիմումը բավարարելու դեպքում արձակում է կարգադրություն, որը կողմերի համար դառնում է պարտադիր այն արձակելուց 10 օր հետո:

2. Նոտարի արձակած կարգադրությունը պետք է պարունակի՝

1) նշում առ այն, որ նոտարն ըստ էության չի ստուգել պահանջի հիմնավորվածությունը, բացառությամբ սույն օրենքի 82.9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի.

2) նշում բռնագանձվող գումարի և տոկոսների չափի վերաբերյալ, այդ թվում բռնագանձվող գումարի ընդհանուր չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, տուժանքի (տուգանքի, տույժի), վնասների չափերը, ինչպես նաև այն գումարի չափը, որի վրա հաշվեգրվում են տոկոսներ, այդ տոկոսների չափը և դրանց հաշվեգրման սկզբի տարին. ամիսը և ամսաթիվը

3) եզրահանգումներ նոտարական գործողության վճարի և պարտապանի կողմից դրա հատուցման վերաբերյալ:

3. Գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը ոչ ուշ, քան արձակվելու հաջորդ օրն ուղարկվում է դիմողին և պարտապանին:

4. Կողմերի համար պարտադիր դարձած գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրության հարկադիր կատարման համար նոտարն եռօրյա ժամկետում էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, որում նշվում են՝

1) գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրություն արձակած նոտարի անունը և նոտարական տարածքը.

2) գումարի բռնագանձման պահանջով կարգադրության վարույթի մասնակիցների անունները (անվանումները), նրանց հաշվառման (գտնվելու) վայրի, ֆիզիկական անձի հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի, իսկ բնակության վայրն անհայտ լինելու դեպքում՝ գույքի գտնվելու վայրի հասցեն, ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, առկայության դեպքում՝ հանրային ծառայության համարը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը.

3) գումարի բռնագանձման պահանջով կարգադրության արձակման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և համարը,

4) գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը կողմերի համար պարտադիր դառնալու ամսաթիվը,

5. Նոտարը էլեկտրոնային հաղորդագրության հետ միասին ուղարկում է նաև արձակված կարգադրությանը:

Հոդված 82.11. Նոտարի որոշումները (կարգադրությունը) և ծանուցումները ուղարկելու (հանձնելու) կարգը

1. Եթե կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված է էլեկտրոնային փոստի կամ հաղորդակցության այլ միջոցներով ծանուցման կարգ, ապա նոտարի որոշումները և ծանուցումներն իրականացվում են այդ եղանակով:

2. Նոտարի որոշումները և ծանուցումներն էլեկտրոնային փոստի հասցեով կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով ուղարկվելու դեպքում հասցեատերն ստանում է որոշման կամ ծանուցման տեքստը կամ համապատասխան էլեկտրոնային հղումը, որի միջոցով որոշումը կամ ծանուցումը կարող է հասանելի դառնալ հասցեատիրոջը:

3. Այն դեպքերում, երբ ծանուցումը հնարավոր չէ իրականացնել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, ապա նոտարի որոշումները կամ ծանուցումները ուղարկվում են փոստային առաքմամբ կամ հանձնվում են առձեռն՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

4. Եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է կամ պատվիրված նամակով ուղարկելու դեպքում ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, նոտարը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), ապա նոտարի որոշումը կամ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, փաստաթղթերը համարվում են հանձնված (ստացված):

Հոդված 82.12. Գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը վիճարկելը

1. Գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը կողմերը կարող են վիճարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում՝ գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը նոտարին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի գործարկման վերաբերյալ Նոտարական պալատի հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից չեղյալ ճանաչել «Նոտարիատի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2022 դեկտեմբերի 23-ի թիվ 586-Ն օրենքը:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարկմանը հաջորդող երկամսյա ժամկետում

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նոտարիատի մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 21.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«21.1) արձակում է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն.»:

Հոդված 2. Օրենքի 36.1-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1. Նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողությունների արդյունքում կայացվող որոշումը, գործարքը, գումարի բռնագանձման պահանջով արձակած կարգադրությունը կամ այլ փաստաթղթի հաստատումը կամ վավերացումը, կատարողական մակագրության թերթը հանդիսանում են նոտարական ակտ:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել 18.2 գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գ Լ ՈՒ Խ 18.2

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՄԱՐԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋՈՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼԸ

Հոդված 82.4 Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմում ներկայացնելը

1. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը (այսուհետ՝ դիմում) ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի (ներառյալ՝ *փուժանքի (տուգանքի, տույժի), տոկոսների և այլ վճարների*) բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմում նոտարին ներկայացնում են բանկերը, վարկային կազմակերպությունները, ինչպես նաև էներգետիկայի (էլեկտրաէներգետիկայի, ջերմամատակարարման, գազամատակարարման), ջրային և հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) ոլորտներում կարգավորվող գործունեություն իրականացնող անձինք (այսուհետ սույն գլխում նաև՝ դիմող)՝ սպառողների կամ հաճախորդների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Արտարժույթով պահանջ ներկայացվելու դեպքում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցելու հարցը որոշվում է դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով դիմող է համարվում նաև այն անձը, ում զիջվել է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանագրերից բխող պահանջը:

3. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումի հետ չեն կարող ներկայացվել դրամական բնույթ չկրող պահանջներ, բացառությամբ շարժական գույք հանդիսացող

գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու պահանջների, եթե գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնությամբ սահմանվել է առանց դատարան դիմելու շարժական գույք հանդիսացող գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու մասին պայման:

4. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումը կարող է ներկայացվել մեկից ավելի անձանց դեմ, եթե պարտավորությունը համապարտ է:

5. Սույն հոդվածում նշված պահանջները ենթակա են քննության նոտարի կողմից սույն գլխով սահմանված կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելը մերժելու մասին որոշում

6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ գլխով նախատեսված կանոնները տարածվում են սույն գլխի նկատմամբ այնքանով, որքանով դրանք կիրառելի են նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու նկատմամբ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով:

Հոդված 82.5 Նոտարների միջև գործերի բաշխման և վերաբաշխման կարգը

1. Նոտարների միջև գործերի բաշխումը և վերաբաշխումը կատարվում է բացառապես հատուկ համակարգչային ծրագրի միջոցով (այսուհետ՝ Համակարգչային ծրագիր), որի շահագործման կարգը սահմանվում է Արդարադատության նախարարի հրամանով:

2. Դիմումը նոտարների միջև բաշխվում է այնպես, որպեսզի ապահովվի դրանց հնարավորինս հավասարաչափ բաշխումը: Նոտարների միջև դիմումների բաշխման, վերաբաշխման կարգը և չափանիշները սահմանվում է Արդարադատության նախարարի հրամանով:

3. Համակարգչային ծրագրի մշակման և գործարկման կարգը սահմանում է Նոտարական պալատը:

4. Եթե օբյեկտիվ պատճառներով առաջացել են տեխնիկական խնդիրներ՝ կապված Համակարգչային ծրագրի շահագործման հետ, ապա այդ հանգամանքը հայտնաբերած նոտարը անհապաղ այդ մասին տեղեկացնում է Նոտարական պալատին: Նոտարական պալատը ծանուցումն ստանալուց անմիջապես հետո քննարկում է պատճառները և դրանց վերացման ուղղությամբ տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ Համակարգչային ծրագրի անխափան շահագործման համար պատասխանատու աշխատակիցներին:

Հոդված 82.6 Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի ձևը և բովանդակությունը

1. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը Նոտարական պալատ ներկայացվում է էլեկտրոնային եղանակով, որում պետք է նշվեն՝

1) Նոտարական պալատի անվանումը,

2) դիմողի անվանումը, գտնվելու վայրի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, ինչպես նաև դիմողի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն՝ նոտարի որոշումները նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջնորդությամբ,

3) պարտապանի անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը), հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ ֆիզիկական անձի հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի, իսկ բնակության վայրն անհայտ լինելու դեպքում՝ գույքի գտնվելու վայրի հասցեն, ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, առկայության դեպքում՝ հանրային ծառայության համարը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը.

4) դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ բռնագանձման ենթակա գումարի, ինչպես նաև առկայության դեպքում պահանջվող տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների գումարների հիմքն ու չափը, դրանց հաշվարկը.

5) պահանջը հաստատող ապացույցները, այդ թվում՝ պայմանագիրը և (կամ) պայմանագրի կնքման փաստը հավաստող ապացույցները.

6) առկայության դեպքում՝ պահանջի զիջման մասին պայմանագիրը, եթե դիմումը ներկայացվում է զիջված պահանջի հիման վրա.

7) պահանջ՝ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին,

8) հայտարարություն առ այն, որ պահանջը կապված չէ դեռևս չկատարված հանդիպակաց պարտավորությունների հետ, կամ հանդիպակաց պարտավորություններն արդեն կատարված են,

9) կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը,

10) առկայության դեպքում տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի քննության և լուծման համար,

11) հայտարարություն առ այն, որ առկա չէ նույն անձանց վերաբերյալ, միևնույն փաստական հիմքերով և միևնույն պահանջի վերաբերյալ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելը մերժելու մասին որոշում,

12) նշում առ այն, որ պայմանագրով սահմանված է ծանուցման այլ կարգ՝ դրա առկայության դեպքում:

2. Դիմումին կցվում են պահանջը հաստատող ապացույցները, ինչպես նաև նոտարական գործողության վճարի վճարումը հավաստող փաստաթուղթը:

3. Դիմումը ստորագրում է դիմողը կամ նրա ներկայացուցիչը: Դիմումը ստորագրվում է էլեկտրոնային եղանակով:

4. Ներկայացուցչի ստորագրած դիմումին կցվում են նրա լիազորությունը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Դիմողի ներկայացուցչի լիազորությունները կարող են հաստատվել նաև էլեկտրոնային կամ ֆաքսիմիլային ստորագրությամբ տրված լիազորագրով, ինչպես նաև ստորագրված լիազորագրի սկանավորված տարբերակը ներկայացնելով:

5. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու համար գանձվում է նոտարական գործողության վճար՝ Կառավարության որոշմամբ սահմանված չափով:

Հոդված 82.7. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը վերադարձնելը

1. Նոտարը դիմումը ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է դիմումը, եթե՝

1) չեն պահպանվել սույն օրենքով դիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները.

~~2) չեն ներկայացվել նոտարական գործողության վճարի վճարումը հավաստող փաստաթուղթը.~~

~~3~~2) դիմումը ստորագրված չէ, կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնեական դրությունը նշված չէ.

~~4~~3) դիմումը ներկայացրել է սույն օրենքի 82.4-րդ հոդվածի 1-ին մասում չնշված անձի կողմից.

~~5~~4) ներկայացված դիմումում միացված են մի քանի պահանջներ, որոնցից մեկը ենթակա չէ նոտարի քննությանը,

~~6~~5) դիմողը ներկայացրել է դիմումը հետ վերցնելու պահանջ.

~~7~~6) դիմումի, այդ թվում՝ դիմումով ներկայացված պահանջի ու ներկայացված փաստաթղթերի (ապացույցների) միջև առկա է անհամապատասխանություն և առկա է այն շտկելու հնարավորություն:

2. Դիմումը վերադարձնելու մասին որոշումը էլեկտրոնային եղանակով ուղարկվում է պահանջատիրոջը, որն այն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում դրանում մատնանշված թերությունները վերացնելու դեպքում կարող է այն կրկին ներկայացնել:

3. Սահմանված ժամկետում թերությունները շտկելու դեպքում դիմումը համարվում է ներկայացված սկզբնական ներկայացման օրը:

4. Կրկին ներկայացված դիմումը մակագրվում է դիմումը վերադարձրած նույն նոտարին:

5. Դիմողի կողմից կրկին ներկայացված դիմումում նախկինում վկայակոչված թերությունները չշտկելու դեպքում, թերությունների շտկման համար նոր ժամկետ չի տրամադրվում:

Հոդված 82.8. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի քննության ժամկետը և կարգը

1. Եթե առկա չեն դիմումը վերադարձնելու կամ սույն օրենքի 82.9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը մերժելու հիմքերը, նոտարը դիմումն ստանալու օրվանից յոթ աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է պարտապանին ստացված դիմումի մասին՝ առաջարկելով ծանուցումն ստանալու օրվանից քսան օրվա ընթացքում կատարել պարտավորությունը կամ ներկայացնել իր առարկությունները գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումի վերաբերյալ: Ծանուցման մեջ նշվում է նաև այն մասին, որ՝

1) գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը նոտարի կողմից արձակվելու դեպքում այն կողմերի համար դառնում է պարտադիր այն արձակելուց 10 օր հետո և ենթակա է հարկադիր կատարման÷.

2) գումարի բռնագանաձման պահանջով կարգադրություն արձակելու դեպքում նոտարական գործողության վճարի հատուցման պարտականությունը դրվում է պարտապանի վրա.

3) եթե գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումը «Նոտարիատի մասին» օրենքի 82.9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքով նոտարի կողմից մերժվում է, և դատարանն ամբողջությամբ բավարարում է նույն անձի դեմ նույն փաստական հիմքով ներկայացված պահանջը, գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու հետ կապված ծախսը (նոտարական գործողության վճարը)՝ դրա կրկնապատիկի չափով, հատուցելու պարտականությունը կարող է դրվել պարտապանի վրա:

2. Պարտապանին տրամադրված 20-օրյա ժամկետի ավարտին հաջորդող երկշաբաթյա ժամկետում նոտարը՝

1) ամբողջովին մերժում է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը.

2) արձակում է գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն:

Հոդված 82.9. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումի մերժումը

1. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը սույն օրենքի 82.8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում մերժվում է, եթե՝

1) առկա է նույն անձանց վերաբերյալ, միևնույն փաստական հիմքերով և միևնույն պահանջի վերաբերյալ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելը մերժելու կամ կարգադրություն արձակելու մասին նոտարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշում.

2) դիմողը սահմանված ժամկետում չի վերացրել նոտարի կողմից դիմումը վերադարձնելու մասին որոշմամբ մատնանշված թերությունները.

3) պահանջն առերևույթ հիմնավորված չէ.

4) պահանջի հիմքում ընկած գործարքն կամ գործարքի որևէ էական պայման առոչինչ է:

2. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը սույն օրենքի 82.8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում մերժվում է, եթե պարտապանը ծանուցում ստանալուց հետո սահմանված 20-օրյա ժամկետում՝

1) ներկայացրել է առարկություն, կամ

2) կատարել է վճարման պահանջը:

3. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու դեպքում նոտարն այդ մասին կայացնում է որոշում, որը ոչ ուշ քան հաջորդ օրը ուղարկվում է դիմողին և պարտապանին:

4. Գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումը մերժելու մասին նոտարի որոշումը չի զրկում դիմողին հետագայում նույն պահանջը դատարան ներկայացնելու իրավունքից:

Հոդված 82.10. Գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրության բովանդակությունը, այն պարտապանին ուղարկելը և կողմերի համար պարտադիր դառնալը

1. Նոտարը դիմումը բավարարելու դեպքում արձակում է կարգադրություն, որը կողմերի համար դառնում է պարտադիր այն արձակելուց 10 օր հետո:

2. Նոտարի արձակած կարգադրությունը պետք է պարունակի՝

1) նշում առ այն, որ նոտարն ըստ էության չի ստուգել պահանջի հիմնավորվածությունը, բացառությամբ սույն օրենքի 82.9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի.

2) նշում բռնագանձվող գումարի և տոկոսների չափի վերաբերյալ, այդ թվում բռնագանձվող գումարի ընդհանուր չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, տուժանքի (տուգանքի, տույժի), վնասների չափերը, ինչպես նաև այն գումարի չափը, որի վրա հաշվեգրվում են տոկոսներ, այդ տոկոսների չափը և դրանց հաշվեգրման սկզբի տարին. ամիսը և ամսաթիվը;

3) եզրահանգումներ նոտարական գործողության վճարի և պարտապանի կողմից դրա հատուցման վերաբերյալ:

3. Գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը ոչ ուշ, քան արձակվելու հաջորդ օրն ուղարկվում է դիմողին և պարտապանին:

4. Կողմերի համար պարտադիր դարձած գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրության հարկադիր կատարման համար նոտարն եռօրյա ժամկետում էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, որում նշվում են՝

1) գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրություն արձակած նոտարի անունը և նոտարական տարածքը.

2) գումարի բռնագանձման պահանջով կարգադրության վարույթի մասնակիցների անունները (անվանումները), նրանց հաշվառման (գտնվելու) վայրի, ֆիզիկական անձի հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի, իսկ բնակության վայրն անհայտ լինելու դեպքում՝ գույքի գտնվելու վայրի հասցեն, ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, առկայության դեպքում՝ հանրային ծառայության համարը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը.

3) գումարի բռնագանձման պահանջով կարգադրության ~~կայացման~~ արձակման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և համարը,

4) գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը կողմերի համար պարտադիր դառնալու ամսաթիվը,

5. Նոտարը էլեկտրոնային հաղորդագրության հետ միասին ուղարկում է նաև արձակված կարգադրությանը:

Հոդված 82.11. Նոտարի որոշումները (կարգադրությունը) և ծանուցումները ուղարկելու (հանձնելու) կարգը

1. Եթե կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված է էլեկտրոնային փոստի կամ հաղորդակցության այլ միջոցներով ծանուցման կարգ, ապա նոտարի որոշումները և ծանուցումներն իրականացվում են այդ եղանակով:

2. Նոտարի որոշումները և ծանուցումներն էլեկտրոնային փոստի հասցեով կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով ուղարկվելու դեպքում հասցեատերն ստանում է որոշման կամ ծանուցման տեքստը կամ համապատասխան էլեկտրոնային հղումը, որի միջոցով որոշումը կամ ծանուցումը կարող է հասանելի դառնալ հասցեատիրոջը:

3. Այն դեպքերում, երբ ծանուցումը հնարավոր չէ իրականացնել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, ապա նոտարի որոշումները կամ ծանուցումները ուղարկվում են փոստային առաքմամբ կամ հանձնվում են առձեռն՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

4. Եթե անձը հրաժարվել է ստանալ փոստային առաքանին, կամ կողմի նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է կամ պատվիրված նամակով ուղարկելու դեպքում ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, նոտարը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), ապա նոտարի որոշումը կամ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, փաստաթղթերը համարվում են հանձնված (ստացված):

Հոդված 82.12. Գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը վիճարկելը

1. Գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը կողմերը կարող են վիճարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում՝ գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումը նոտարին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի գործարկման վերաբերյալ Նոտարական պալատի հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից չեղյալ ճանաչել «Նոտարիատի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2022 դեկտեմբերի 23-ի թիվ 586-Ն օրենքը:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն ~~օրենքն ուժի մեջ մտնելուց առնվազն երկու ամիս առաջ~~ օրենքի պաշտոնական հրապարկմանը հաջորդող երկամսյա ժամկետում~~:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-621-21.06.2023-ՊԻ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-621[1]-21.06.2023-ՊԻ-011/1), ««ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-621[3]-21.06.2023-ՊԻ-011/1) ԵՎ ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-621[4]-21.06.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-621-21.06.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1-ին**	«դրվում է» բառերը փոխարինել «կարող է դրվել» բառերով	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Նախագիծ**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-5-րդ հոդվածներով. **«Հոդված 4.** Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «թերթ տալը մերժելու» բառերից հետո լրացնել «կամ նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելը մերժելու» բառերով: **Հոդված 5.** Օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ կետ. «6.1) սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 8-րդ մասում նշված տեղեկությունները՝ նույն մասում նշված գործերի քննության դեպքում.»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	**Հոդված 4**	«Օրենսգիրքը» բառը փոխարինել «Օրենսգրքի» բառով	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	**Նախագիծ**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ հոդվածով. **«Հոդված 7.** Օրենսգրքի 307-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. «Դատարանին ենթակա չէ «Նոտարիատի մասին» օրենքի 82.4-րդ հոդվածով սահմանված նոտարին ենթակա գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու մասին դիմումների քննությունը:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	**Հոդված 5**	5-րդ հոդվածը հանել	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	**Նախագիծ**	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ հոդվածով. «**Հոդված 8.** Օրենսգրքի 51.1-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**ԳԼՈՒԽ 51.1.** **ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՄԱՐԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋՈՎ ԱՐՁԱԿՎԱԾ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՎ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ** **Հոդված 345.1. Նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելը** 1. Նոտարի կողմից՝ կողմերի համար պարտադիր դարձած գումարի		Ընդունվել է:

			բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը պարտապանը կարող է վիճարկել դատական կարգով գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով: 2. Նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու մասին դիմումը կարող է ներկայացվել այն կողմերի համար պարտադիր դառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: 3. Նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է՝ 1) պարտապան ֆիզիկական անձի հաշվառման վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան: Հաշվառման վայր չունենալու և վերջին բնակության վայրն անհայտ լինելու դեպքում՝ պարտապանի գույքի գտնվելու վայրի դատարան: 2) պարտապան իրավաբանական անձի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան: **Հոդված 345.2. Նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու հիմքերը** 1. Առաջին ատյանի դատարանը չեղյալ է ճանաչում նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը, եթե՝ 1) դիմումը ենթակա չէր քննության նոտարի կողմից. 2) նոտարը կարգադրությունն		

			արձակել է «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված ընթացակարգային նորմերի պահանջների էական խախտմամբ: 3) պարտապանը չի ունեցել պահանջի դեմ «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում առարկություն ներկայացնելու հնարավորություն կամ զրկված է եղել գումարի բռնագանձման պահանջով կարգադրության վարույթին մասնակցելու հնարավորությունից: **Հոդված 345.3. Դիմումին ներկայացվող պահանջները** 1. Նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումում նշվում են՝ 1) դատարանի անվանումը, որտեղ ներկայացվում է դիմումը, 2) կարգադրություն արձակած նոտարի անունը և նոտարական տարածքը. 3) կարգադրության վարույթի մասնակիցների անունները (անվանումները), նրանց հաշվառման (գտնվելու) վայրի, ֆիզիկական անձի հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի, իսկ բնակության վայրն անհայտ լինելու դեպքում՝ գույքի գտնվելու վայրի հասցեն, ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, առկայության դեպքում՝ հանրային ծառայության համարը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը. 4) գումարի բռնագանձման պահանջով կարգադրության արձակման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և համարը,		

			5) գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը կողմերի համար պարտադիր դառնալու ամսաթիվը, 6) գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը վիճարկելու հիմքերն ու հիմնավորումները, 7) գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղյալ ճանաչելու վերաբերյալ պահանջը: 2. Գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումին կցվում են՝ 1) գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրության բնօրինակը կամ դրա պատշաճ ձևով վավերացրած պատճենը, 2) օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը, 3) դիմումը և դրան կից փաստաթղթերը մյուս կողմին և նոտարին ուղարկելը հավաստող փաստաթուղթը: 3. Սույն օրենսգրքի 345.1-ին հոդվածի կամ սույն հոդվածի պահանջների խախտման դեպքում դատարանը սույն օրենսգրքի 127-րդ հոդվածով սահմանված կարգով վերադարձնում է նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը: **Հոդված 345.4. Դիմումի քննությունը** 1. Նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու		

			վերաբերյալ դիմումն առաջին ատյանի դատարանը քննում է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու օրվանից մեկամսյա ժամկետում՝ առանց դատական նիստ հրավիրելու: 2. Դատարանը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտությամբ: Դատական նիստի վայրի և ժամանակի մասին կողմերը ծանուցվում են: Այդ դեպքում նոտարի կողմից արձակված գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը քննվում և դրա վերաբերյալ որոշում է կայացվում դիմումը վարույթ ընդունելու օրվանից երկու ամսվա ընթացքում: 3. Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը նշվում են դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ: Դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը կարող է փոփոխվել սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հրավիրված դատական նիստում՝ Դատարանի արձանագրային որոշմամբ: 4. Դատարանը կարող է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակած նոտարից՝ որպես իրավասու անձի, պահանջել այն գործով նյութերը, որով կայացված կարգադրությունը վիճարկվում է դատարանում:		

			5. Դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է նոտարի կողմից արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու՝ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը: **Հոդված 345.5. Դատարանի որոշումը** 1. Դիմումի քննության արդյունքով դատարանը կայացնում է որոշում՝ դիմումն ամբողջությամբ բավարարելու և նոտարի կողմից արձակված գումարի բռնագանձման պահանջով կարգադրությունն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու կամ դիմումն ամբողջությամբ մերժելու մասին: 2. Դատարանի որոշումը պետք է բավարարի սույն օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված պահանջները: 3. Դատարանի որոշման մեջ պետք է նշվեն՝ 1) վիճարկվող կարգադրությունն արձակած նոտարի անունն ու նոտարական տարածքը. 2) վիճարկվող կարգադրության արձակման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը. 3) վիճարկվող կարգադրության կողմերի համար պարտադիր դառնալու տարին, ամիսը, ամսաթիվը. 4) գործին մասնակցող անձանց անունները (անվանումները). 5) դատարանի եզրահանգումը՝ նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունն		

			ամբողջությամբ չեղյալ ճանաչելու կամ դիմողի պահանջն ամբողջությամբ մերժելու վերաբերյալ: 4. Դատարանի որոշումը հրապարակվում է վճռի հրապարակման համար սույն օրենսգրքով սահմանված կարգով: Դատարանի որոշումը օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերող անձն իր վերաքննիչ բողոքում հիմնավորում է, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ: 5. Դատարանի որոշումը կողմերին է ուղարկվում հրապարակման պահից եռօրյա ժամկետում»:»:		
7.	ՀՀ կառավարություն	**6-րդ հոդվածի վերնագիր**	«Եզրափակիչ» բառից հետո լրացնել «մաս» բառով		Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	**Նախագիծ**	Ուղղել համարակալումը		Ընդունվել է:
«ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-621[1]-21.06.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 1.** 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 220-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով. «1.1. Վարչական դատարանին ընդդատյա չեն «Նոտարիատի մասին» օրենքով նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դիմումի քննության արդյունքում կայացված որոշումների վիճարկման, այդ թվում՝	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			արձակված կարգադրության չեղյալ ճանաչելու վերաբերյալ գործերը:»:		
««ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-621[3]-21.06.2023-ՊԻ-011/1)					
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 3**	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող **82.4-րդ հոդվածի 1-ին մաս**ը առաջարկում ենք լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ « Արտարժույթով պահանջ ներկայացվելու դեպքում նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցելու հարցը որոշվում է դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:»	Ընդունվել է : Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Հոդված 3**	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 82.7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը առաջարկում ենք հանել, միաժամանակ հոդվածի համարակալումը համապատասխանեցնել, կատարված փոփոխությանը:	Ընդունվել է : Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	**Հոդված 3**	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 82.8 հոդվածի 1-ին մասը առաջարկում ենք լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ և 3-րդ կետերով. «2) գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու դեպքում նոտարական գործողության վճարի հատուցման պարտականությունը դրվում է պարտապանի վրա. 3) եթե գումարի բռնագանձման	Ընդունվել է : Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:

			պահանջով կարգադրություն արձակելու դիմումը «Նոտարիատի մասին» օրենքի 82.9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքով նոտարի կողմից մերժվում է, և դատարանն ամբողջությամբ բավարարում է նույն անձի դեմ նույն փաստական հիմքով ներկայացված պահանջը, գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակելու հետ կապված ծախսը (նոտարական գործողության վճարը)՝ դրա կրկնապատիկի չափով, հատուցելու պարտականությունը կարող է դրվել պարտապանի վրա:», միաժամանակ հոդվածի համարակալումը համապատասխանեցնել, կատարված փոփոխությանը:		
4.	ՀՀ կառավարություն	**Հոդված 3**	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 82.10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը առաջարկում ենք «,վերաբերյալ բառերից հետո» լրացնել «, այդ թվում բռնագանձվող գումարի ընդհանուր չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, տուժանքի (տուգանքի, տույժի), վնասների չափերը, ինչպես նաև այն գումարի չափը, որի վրա հաշվեգրվում են տոկոսներ, այդ տոկոսների չափը և դրանց հաշվեգրման սկզբի տարին. ամիսը և ամսաթիվը.» բառերով :	Ընդունվել է : Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	**Հոդված 3**	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 82.10-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկում ենք «կատարման համար նոտարն» բառերից	Ընդունվել է : Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:

			հետո լրացնել «եռօրյա ժամկետում» բառերը:		
6.	ՀՀ կառավարություն	**Հոդված 3**	Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 82.10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում առաջարկում ենք «կայացման» բառը փոխարինել «արձակման» բառով:	Ընդունվել է : Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	Հոդված 4	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք «օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առնվազն երկու ամիս առաջ » բառերը փոխարինել «օրենքի պաշտոնական հրապարկմանը հաջորդող երկամսյա ժամկետում» :	Ընդունվել է : Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-621[4]-21.06.2023-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով լրացվող «ժէ» կետում «վերաբերյալ» բառից հետո լրացնել «դիմումի քննության արդյունքում կայացված» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասը հանել:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: